

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԵՐԵՎԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք.ԳԱՎԱՌ

„5,, հունիսի 2014թ.

Նախագահում էր՝
Ռ.Գրիգորյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Մասնակցում էին՝

- Ա. Մելքոնյանը - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության պետ
- Գ. Բադալյանը - մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ
- Մ. Գալոյանը - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Մ. Այվազյանը - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ

Ս. Խաչատրյանը - մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ

Ս. Լազյանը - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/:

Քննարկվեց՝

1. «ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՍԱՆ ՆԱԻՐԱ ՀՈՎԻԿԻ ՀԱՄԼԱՏՅԱՆԻ ՏԱՐԻՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու քիազորությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 18-Ն որոշումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովը/այսուհետ՝ Հանձնաժողով/ քննարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ տնօրեն Նիկոլայ Նալբանդյանի Հանձնաժողովին ուղղված և մարզպետարանի աշխատակազմ մուտքագրված՝ մտից 29.05. 2014թ. 100/3647-14, դիմումը՝ Գավառի մանկատան սան, ծնունդը չձևակերպված Նաիրա Հովիկի Համլատյանի տարիքը սահմանելու խնդրով:

Գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում

նախկինում ապրել է Փարաքար գյուղում, պետական խնամք իրականացնող որևէ հաստատությունում տեղավորելու խնդրով: 20.08.2010թ. N 01/17/2132-10 գրությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետարանը դիմել է ՀՕՑ-ի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի տնօրեն տիկին Մ. Անտոնյանին երեխային կենտրոնում ժամանակավոր տեղավորելու համար:

Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 02.12.2010թ. թիվ 2 եզրակացության համաձայն՝ Նաիրա Համլատյանի մայրը՝ Գայանե Համալջյանը, չունի անձը հաստատող փաստաթուղթ, մշտական բնակավայր, անկարող է ապահովել երեխայի համար նվազագույն պայմաններ և անտարբեր է նրա նկատմամբ: Հաշվի առնելով Գայանե Համլատյանի եղբայրների ցանկությունը, Փարաքարի գյուղապետարանը որոշում է կայացրել Նաիրա Համլատյանին պետական խնամքի որևէ հաստատությունում տեղավորելու մասին: Փարաքար համայնքի ղեկավարի 03.12.2010թ. թիվ 654 գրությամբ Նաիրա Համլատյանը տեղավորվել է ՀՕՑ-ի երեխաների աջակցության կենտրոնում:

Նաիրա Հովիկի Համլատյանը չունի ծննդյան վկայական: Նրա մայրը նույնպես չունի ծննդյան վկայական և անձնագիր: Մայրը՝ Գայանե Նապոլեոնի Համլատյանը, ծնվել է 1972թ. հոկտեմբերի 21-ին, Վրաստանի Թբիլիսի քաղաքում՝ կանանց գաղութում: Վերսկսված փաստարկներով „Երեխաների աջակցության կենտրոն,, հրմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանը 21/10/2010թ. N 98/10 գրությամբ դիմել է ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ բաժնի պետ պարոն Հ. Նավասարդյանին /մտից 4983 25.10.2010թ./, որը 08.11.2010թ., թիվ 2-11941 գրությամբ հայտնել է, որ Գայանե Համլատյանի ծննդյան վկայականի կրկնօրինակը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Գայանե Համլատյանի բնակության վայրի կամ հիմնադրամի գտնվելու վայրի ՔԿԱԳ տարածքային բաժին և 21.10.2010թ թիվ 98/10 գրության կապակցությամբ հարցում է կատարվել ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 13.01. 2011թ թիվ 01 ուղեգրով Նաիրա Հովիկի Համլատյանը, որպես միայնակ մոր երեխա, տեղավորվել է Մարի Իզմիրյանի անվան մանկատուն:

2011 թ. փետրվարի 28-ի թիվ 0-86 նամակով Մարի Իզմիրյանի անվան մանկատան տնօրեն Հ. Մկրտչյանը դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Ն. Մուրադխանյանին Նաիրա Համլատյանի մոր՝ Գայանե Համլատյանի ծննդյան վայրը՝ Վրաստան, արձանագրող ակտի պատճենը: ձեռք բերելու հարցով՝ նրա համար անձնագիր և Նաիրայի համար ծննդյան վկայական ձեռք բերելու համար:

„Գավառի մանկատուն,, ՊՈԱԿ տնօրեն Ն.Նալբանդյանի 2014թ մայիսի 8-ի թիվ 17-10 գրության համաձայն՝ 2012 թ. հունվարի 25-ից Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատնից Գավառի մանկատուն տեղափոխված Նաիրա Հովիկի Համլատյանը ծննդյան վկայական չունի:

Երեխայի մայրը չունի մշտական բնակության վայր, վարում է թափառաշրջիկի կյանք, նրա գտնվելու վայրի մասին մինչև օրս որևէ տեղեկություն չկա:

Երեխայի անձը հաստատող փաստաթուղթ ձեռք բերելու նպատակով դիմվել է պետական տարբեր ատյաններ՝ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալություն,

ծննդյան վկայականի հարցը առայսօր չի լուծվել՝ իրավական հիմքեր չլինելու պատճառով:

Հանձնարարվեց

1. Հանձնաժողովին՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 935-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգի «հավելվածի 11-րդ կետի պահանջով», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», N 18-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ և 17-րդ կետերի դրույթներով բավարարել «Գավառի մանկատուն», ՊՈԱԿ տնօրեն Նիկոլայ Նալբանդյանի 2014 թվականի մայիսի 29-ի դիմումում բարձրացված հարցը:

Գավառի մանկատան սան Նաիրա Հովիկի Համլառյանի տարիքը սահմանել 2003թ հուլիսի 10-ը ու տալ համապատասխան եզրակացություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԱՌՏՈՒՄ



N. Ghanyan

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

A. Ghanyan

Ա.ՄԵԼԵՈՆՅԱՆ

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

05 ՀՈՒՆԻՍԻ 2014թ.

N 1 - 2014

ԵՐԵՒԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Երեխայի տարիքը որոշող Գեղարքունիքի մարզային համձնաժողովը քննության առնելով

<<Գավառի մանկատուն>> ՊՈԱԿ-ի տնօրենի 08. 05. 2014թ. թիվ 17- 100 գրությունը՝

(դիմումը ներկայացրած մարմնի անվանումը կամ անձի անունը, հայրանունը, ազգանունը)

մանկատան սան Նաիրա Հովիկի Համլատյանի

իզական սեռի երեխայի տարիքը որոշելու մասին դիմումը, որի ծնողներն են՝
(Երեխայի սեռը)

մայրը՝ Գայան Նապոլեոնի Համլատյան
(անունը, հայրանունը, ազգանունը)

հայրը՝ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ե Գ

Երեխայի տարիքն է՝ 10 տարեկան 11 ամսական

ծննդյան ժամանակն է՝ 10 Հուլիսի 2003թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. Պրոսպեր ԳՐԻԳՈՐՅԱՆ
(ստորագրությունը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՄԱՐ Մ. Պրոսպեր Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ
(ստորագրությունը)